01 օգոստոսի, 2019 Երևան

Կայացավ 2019-2022 թթ. հակակոռուպցիոն ռազմավարության և միջոցառումների ծրագրի նախագծերի վերաբերյալ հանրային ամփոփիչ քննարկումը

Օգոստոսի 1-ին, Երևանում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մասնակցությամբ անցկացվեց Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թթ. միջոցառումների ծրագրի նախագծերի վերաբերյալ հանրային քննարկում:

Այն կազմակերպվել է Իրավաբանների հայկական ասոցիացիայի, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի, Հանրային խորհրդի պետահիրավական հարցերի հանձնաժողովի և ՀՀ արդարադատության նախարարության կողմից՝ Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» (ԿԵՀ) ծրագրի շրջանակներում:

Այս հանդիպմամբ ամփոփվելու է քաղաքացիական հասարակության մասնագիտացված կազմակերպությունների, խմբերի, տեղական ինքնակառավարման մարմինների հետ կայացած քննարկումների շարքը: Քննարկմանը՝ բացման իր խոսքում նշեց ԿԵՀ ծրագրի ղեկավար, Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ Կարեն Զաղոյանը:

«Մենք՝ որպես քաղաքացիական հասարակության կազմակերպություններ համախմբող կոալիցիա, առաջարկել ենք կոռուպցիայի դեմ պայքարի հայկական մոդել, որովհետև, գտնում ենք, որ միջազգային փորձը շատ լավ է դասեր քաղելու համար, որպեսզի ձախողված օրինակները չկրկնենք իսկ հաջողված փորձերը տեղայնացնենք: Առաջին օղակում այն բաղկացած է մի մարմնից, որը մենք անվանում ենք ունիվերսալ մարմին, որում են հակակոռուպցիոն 3 բաղադրիչները՝ հակակառուպցիոն կրթությունը, կոռուպցիայի կանխարգելումը և պատժի անխուսափելիության ապահովումը: Երկրորդ օղակում դատախազության մասնագիտացված մարմինն է: Երրորդ օղակը դատական համակարգն է. մենք գտնում ենք, որ պետք է լինեն մասնագիտացված դատարաններ, քանի որ հիմա դատական համակարգի նկատմամբ անվստահություն կա»,- ներկայացնելով ռազմավարության կարևոր բաղադրիչները՝ ասաց Կարեն Զաղոյանը:

Delegation of the European Union
to Armenia
Tel: +37410 54 64 94
Fax: +37410 54 64 95

Armenian Lawyers' Association
Address: 7 Nalbandyan Str., Suite 2,
Yerevan, Armenian, 0010
Tel.: +37410 54 01 99
Fax: +37410 58 02 99

The European Commission is the EU's executive body. The European Union is made up of 28 Member States who have decided to gradually link together their know-how, resources and destinies. Together, during a period of enlargement of 50 years, they have built a zone of stability, democracy and sustainable development whilst maintaining cultural diversity, tolerance and individual freedoms. The European Union is committed to sharing its achievements and its values with countries and peoples beyond its borders.

Քննարկմանը ողջույնի խոսքով հանդես եկավ արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանը՝ շնորհակալություն հայտնելով քաղհասարակության այն կառույցներին, որոնք նախարարության հետ համատեղ քննարկումներ կազմակերպեցին: «Սա չի լինելու քարացած փաստաթուղթ և ենթակա է անընդհատ փոփոխման, այսինքն, եթե տեսնենք, որ մի քանի ամիս անց ինչ-որ մի բան չենք նախատեսել, կամ չհասցնենք ֆինանսական գնահատականը ամբողջ խորությամբ տալ՝ կարող ենք դա վերանայել և փոփոխել, իհարկե չհաշված կոնցեպտուալ հարցերը»,-նշեց նախարարը՝ շեշտելով, թե ինչով է այս ռամավարությունը տարբերվելու նախորդներից:

«Հանրային խորհուրդը իր ստեղծման առաջին օրվանից հակակոռուպցիոն պայքարի քաղհասարակության կառույցների և փորձագետների կողքին է և այսուհետ պատրաստ է իր հարթակը տրամադրել նման քննարկումների, նախագծերի մշակման, վերմշակման, առաջարկությունների ձևավորման նպատակով»,-ողջույնի իր խոսքում ասաց Հանրային խորրդի անդամ Հովհաննես Հեվհաննիսյանը:

Արդարադատության փոխնախարար Սրբուհի Գալյանը քննարկման մասնակիցներին ներկայացրեց Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022թթ. միջոցառումների ծրագրի նախագծերը:

Հավելենք, որ մինչ այս նմանատիպ քննարկումներ են եղել Գյումրիում, Գավառում, Վանաձորում և Արմավիրում:

«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրն իրականացվում է ԵՄ ֆինանսավորմամբ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի կողմից գործընկերներ «Ագորա Սենթրլ Յուրոփ» ՀԿ-ի (Չեխիա), «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՍԻՎԻՏԱՍ» ՀԿ-ի, «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» ՀԿ-ի, «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի և «Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միության հետ համագործակցությամբ:
Ծրագրի նպատակն է մեծացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) և դրանց կոալիցիաների/ցանցերի ազդեցությունը հանրային քաղաքականության մշակման գործընթացի վրա: Սա հնարավորություն կտա կազմակերպություններին (ովքեր արդեն իսկ աշխատում են թիրախային կոալիցիաներում) ձեռք բերել նոր ռեսուրսներ, քաղհասարակության փորձագետներին միավորել և խրախուսել իրենց մասնակցությունը տեղական և ազգային քաղաքականությունների օրակարգի ձևավորմանը, հատկորոշել ընդհանուր խնդիրներն ու առաջնահերթությունները և դիմել կառավարությանը՝ կառուցողական և ռազմավարական քաղաքականության վերաբերյալ նախաձեռնություններով:
Ծրագրի շրջանակներում ենթադրամաշնորհներ են տրամադրվել 9 ՔՀԿ-ների կոալիցիաներին, որոնք ուղղված են հանրային քաղաքականությունների զարգացմանն ու կունենան շոշափելի արդյունքներ **9 թիրախային ոլորտում**, որոնք են արդարադատությունը, մարդու իրավունքները, հանրային ֆինանսների կառավարումը, բիզնեսը, կրթությունը, սոցիալական ոլորտը. հաշմանդամություն ունեցող երեխաների սոցիալական ներառում, գյուղատնտեսությունը, տնտեսությունը, էներգետիկան: Ծրագրի շրջանակներում փոքր դրամաշնորհներ են տրամադրվել նաև 29 ՔՀԿ-ների:

Հեռ.՝ 540199
Էլ. Հասցե՝ info@armla.am
Կայք՝ http://www.armla.am, http://ccd.armla.am